

Է  
7-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԻՏՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱՊԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱԶԱՐԹԱՆ ԱՐՏԱՇԵՍ ՍՈՍԻ

ԳԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ  
ՀԱՐՑԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ/Դ-ՁԻԳ./

Է.00.02 - Ընդհանուր պատմություն մասնագիտությունը

Պատմական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության սնդմագիրը

ԵՐԵՎԱՆ - 1995

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ.Խ.ՍԱՐԳՍՅԱՆ

Գաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
Ք.Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

բանասիրական գիտությունների  
թեկնածու  
Հ.Հ. ԲՅՈՍԵՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

Առենայնստություն պաշտպանությունը կայանալու է „14“, „11“  
1995թ. ժամը 14 -ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական  
աստիճաններ շերտող պատմության ընտրվածի ՕՕԷ մասնագիտական  
խորհրդի նիստում /375019, Երևան, Մարշալ Բարթամյան պող.24/գ/:

Առենայնստությունը կտրելի է ձեռնթանալ Արևելագիտության  
ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրը առաքված է „13“, *հայտնի* 1995թ.

Մասնագիտական խորհրդի գիտնական քաղաքագր,  
պատմական գիտությունների թեկնածու Ա.Վ. Բոսյան

ՔԵՄԱՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Հոռմեական կայսրությունում, նրա պո-  
րովինցիաներում և Արևելքի մի շարք երկրներում քրիստոնեական կրոնը  
պետական մանաչուց ստեղծեց նոր իրավիճակ: Եկեղեցին միջպետական և  
ներպետական փոխհարաբերություններում դարձավ կարևոր գործոն: Քրիս-  
տոնեությունը ընդունած երկրներում պետությունն անկարող էր այլևս  
շրջանցել Եկեղեցին: Քաղաքական պատմությունը ողջ միջնադարի ընթաց-  
քում կապված է եղել եկեղեցու պատմության հետ: Վերջինիս ազդեցու-  
թյունը քաղաքական կյանքի վրա, մանավանդ վաղ միջնադարում, ունեցել  
է էական նշանակություն: Հետևաբար, Քրիստոնյա Արևելքի և Հայոց պատ-  
մության որևէ ժամանակաշրջանի ուսումնասիրություն չի կարող ամբող-  
ջական համարվել՝ առանց եկեղեցու խաղացած դերը հաշվի առնելու:  
Մյուս կողմից, Հայ եկեղեցու և դավանանքի պատմության բազմաբնույթ  
հարցեր անկարելի է վեր հանել և քննել՝ անտեսելով համաքրիստոնեա-  
կան դավանաբանական միտքը, եկեղեցական և պատմական իրողություննե-  
րը:

Սեփական դավանության ու ծիսակարգի, ազգային, ինքնուրույն եկե-  
ղեցիների ձևավորման համար Դ-Է դարերն այն կարևոր ժամանակաշրջանն  
էր, երբ պայքար էր գնում մի կողմից տիրակալական ժողովներում Ընդ-  
հանրական եկեղեցու դավանական դոգմաների ձևավորման ու հավատքի հիմ-  
նական կետերի մշակման, պատրիարքական աթոռների միջև գերագահության  
մյուս կողմից՝ արևելյան ազգային եկեղեցիների ձևավորման, եկեղեցա-  
դավանական ինքնուրույնության հաստատման համար:

Քրիստոնեությունը, դավանանքի համար մղած պայքարը յուրահատուկ  
նշանակություն են ունեցել և տարբեր դեր են խաղացել քրիստոնեու-  
թյունը ընդունած ժողովուրդների ու երկրների մակառաջում: Մի մասի  
համար քրիստոնեությունը, եկեղեցին, այս կամ այն դավանանքը ծառայել  
են քաղաքական նկրտումների իրականացման կամ հոգևոր ու եկեղեցական  
միապետությունների ստեղծման միջոց, մյուսների համար՝ ազգային ինք-  
նություն և ոչ քրիստոնյա երկրների դեմ պայքարում: Այս իմաստով,  
քրիստոնեությունն ընդհանրապես՝ Պարսկաստանի դեմ մղած պայքարում,  
դավանանքն ու եկեղեցին՝ նեստորականության և Բյուզանդիայի /քաղկե-  
դոնականություն/ դեմ պայքարում, Հայոց համար ստացել են առաջնակարգ  
նշանակություն ու բովանդակություն: Նեստորականությանը և քաղկեդո-  
նականությանը, քրիստոնեական մյուս հոսանքներին դիմադրվելը, քրիս-  
տոնեության և քրիստոնաբանության սեփական ընկալումն այսօր էլ եր-



քիմն բացատրվում է մյուսներից անպայմանորեն սահմանազատվելու, անզամ ազգային պարփակվածության միավածություն, որպես հայ իրականությունը ընդունելով Երևույթ: Այդ մտայնության հաղթահարումն այսօր հատկապես կարևորում ենք մյուս եկեղեցիների և քրիստոնյա քրտանիքների հետ առավել սերտորեն փոխհարաբերվելու և փոխանջությունների հարցերում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԳԻՐՆԵՐԸ. Աստիպտությունն նպատակն է վեր հանել Քրիստոնյա Արևելքում Ընդհանրական եկեղեցու խաղացած դերը, դավանական պայքարի գաղափարական և քաղաքական շարժանքները, վաղ միջնադարի քրիստոնյա աշխարհի եկեղեցական հարաբերություններն ընդհանրապես, Հայ եկեղեցու և Քրիստոնյա Արևելքի մյուս եկեղեցիների փոխհարաբերությունները՝ մասնավորապես:

Հետազոտությունն արանց ունենալով Հայ եկեղեցու առնչությունները հարևան քրիստոնյա եկեղեցիների հետ, քրիստոնեական սարքեր դավանանքները՝ նեստորականության, քաղկեդոնականության դեմ պայքարը և նրանց հանդեպ դիրքորոշման դրսևորումը, շարադրանքը կապակցել ենք Քրիստոնյա Արևելքում ծավալված եկեղեցական և քաղաքական իրադարձություններին, հանգամանորեն կանգ առնելով Հայաստանում և հատկապես Հայ եկեղեցու կյանքում դրանց անդրադարձի վրա:

Հոռուր Բաղկեդոնի ժողովով՝ աղանդավոր եվոիքեսի դեմ պայքարի պատրվակով, նոր վարդապետությունն պարտադրեց ալեքսանդրյան պատվածաբանական ոգով սնված Արևելքին:

Հետագա դարերում Արևմուտքն արևելյան եկեղեցիներին /հայկական, ասորական, դպտական/մեղադրելով միաբնակություն մեջ, արևելյան միաբնակ դավանությունը հասկանում էր որպես եվոիքականություն: Արևելքն իր հերթին միշտ կատաճանքով է նայել Արևմուտքի քրիստոսաբանությանը՝ քաղկեդոնականությունը նույնացնելով նեստորականության հետ, այն դիտելով որպես նեստորականության վերածնունդ: Արդյոք շփոթել է Հայ եկեղեցին այդ երկու վարդապետությունները և չի՞ հասկացել նրանց քրիստոսաբանական-դավանական տարբերությունները: Որո՞նք էին այն պատճառները, որ ստիպեցին Արևելքին, նաև Հայ եկեղեցուն, նույնացնել քաղկեդոնականությունը նեստորականության հետ: Խնդիրներ, որոնց պատասխանները մեր կարծիքով կարող են հաղթահարել Հայոց հակաբաղկեդոնական դիրքորոշման պատահականության և ուրիշներից խաղվելու կամ մնացյալ աշխարհին անպայմանորեն հակադրվելու մթայնությունները:

Ընդհանրական եկեղեցու ներքում ծավալված դավանական պայքարին

ընդհանրապես, հակաբաղկեդոնական վեժերին՝ մասնավորապես, Հայ եկեղեցու մասնակցությունն ժամանակի հարցը հայազիտության ցայսօր վիճելի հարցերից է: Մեր խնդիրներից ենք համարել որոշակիացնել հայ և օտար պատմագիտության ու բանասիրության մեջ թափացած արժանիքները, անզամ իրարամերձ կրոնիքների և տեսակետների տեղիք տված այս հարցերը՝ աղբյուրների և պատմական փաստերի նորովի քննությունը ու համարումը:

Միաժամանակ, մեր նպատակն է եղել տալու Հայ եկեղեցու թեմական բաժանման պատկերը մեզ շրջանում /Գ-ի դղ./, քննության նյութ դարձնելով նաև հայ եկեղեցու պատմությունների ծագման, նրանց աշխարհագրական տեղաբաշխման, քանակական և անվանական փոփոխությունների, վարչատարածքային մի շարք կնճոռա հարցեր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ. Վերը թվարկած խնդիրների և հարցերի քննությունը է պայմանավորված ներկա աշխատանքի զիտական նորությունները:

Հայ և օտար սկզբնաղբյուրների, պատմական վավերագրերի պատմական և բանասիրական, քննական և համեմատական վերլուծությանը ներկայացրել ենք Հայ եկեղեցու դավանության մեկտրման պատմությունը, թեմական բաժանման, վարչատարածքային կառուցվածքի վաղ շրջանի պատկերը:

Քրիստոնյա Արևելքում ծավալված դավանական պայքարը չէր կարող աննկատ անցնել Հայ եկեղեցու համար: Նեստորական վարդապետությունն էր, որ առաջին անգամ ստիպեց Հայ եկեղեցուն մասնակից լինելու քրիստոնյա աշխարհն ալեկոծած դավանական վեժերին: Նեստորական քարոզիչների եռանդուն գործունեությունը Հայաստանում և Պարսից պետության հովանավորությունը նրանց, ստիպեց Հայ եկեղեցուն եփեսոսի Գ տիեզերական ժողովից /431թ./ հետո արագ արձագանքելու իր շուրջը ստեղծված իրողություններին: Պատմական փաստերով և աղբյուրագիտական քննությունը փորձել ենք հիմնավորել այն տեսակետը, որ Հայ եկեղեցին, հակառակ Մ.Օրմանյանի<sup>1</sup> ու Ե.Տեր-Մինասյանի<sup>2</sup> կարծիքի, մինչև 506թ. /Գվինի Ա ժողով/ իր մասնակցությունն է ունեցել դավանական խնդիրներում: Հայոց Սահակ Ա Պարթև կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի դավանական թղթակցությունները Կ.Պոլսի Պրոկղ պատրիարքի, Մելիտիների և Եղեմիայի եպիսկոպոսների հետ<sup>3</sup> պապուլյցն են այն փաստի, որ Հայ Ե-

- 1.Օրմանյան Մ., Ազգապատում, հ.Ա, Կ.Պոլիս, 1912, էջ 501-502:
- 2.Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորեոց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 63:
- 3.Գիրք Թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 1-21:



կեղեցին Ե դարի 30-ական թթ-ից զբաղվել է դավանական հարցերով: Այդ ժամանակվանից զմեկ է այն ուղին, որով պետք է քննարար այնուհետև Հայ Եկեղեցին դավանական խնդիրներում:

Այս իմաստով, փորձել ենք լուսաբանել՝  
ա/495թ. Աշոշատի եկեղեցական ժողովի հրավիրման շարժառիթը և նշանակությունը: Ն.Աղոնցն<sup>1</sup> ու Ե.Տեր-Մինասյանը<sup>2</sup> ժողովի հրավիրման այլ պատճառներ են նշում, սակայն մենք գտնում ենք, որ այն գումարվել էր նեստորականությանը պաշտոնապես հակահարված տալու անհրաժեշտությունը, Հայաստան ներթափանցած նեստորական քարոզիչների ու Էպիսկոպոսների դիմադրությունն քննող մեկնասիր կոտորելու և ժողովի որոշումները պաշտոնական դավանանքի տեսք տալու համար:

բ/Փորձել ենք համալիրել այն տեսակետը, որ Հայ Եկեղեցին հակաքաղկեդոնական պայքարին մասնակցել է Ե դարի 80-ական թթ-ից սկսած, երբ Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի օրոք /478-490/ քննունվել է Ջենոն կայսեր, , Հենոտիկոնր, և թարգմանվել հույն միաբնակ աստվածաբան Տիմոթեոս Կուզի հակաքաղկեդոնական, հակա-նեստորական, , Հակաժողովուրդ, ,:

գ/Տիմոթեոս Կուզի, , Հակաժողովուրդ, , թարգմանությունը դեռևս Ե դարի վերջերին Հայ Եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը չէր /Ն.Ալիսյան, Ե.Տեր-Մինասյան, Պ.Անանյան/՝ ժամանակի պայմաններից ելնելով, սակայն արտահայտությունն էր դեպի Ալեքսանդրյան քրիստոսաբանությունը հակված Հայ Եկեղեցու դավանական սկզբունքների և մերժողական դիրքորոշումը Անտիոքի աստվածաբանության հանդեպ:

դ/Քաղկեդոնի ժողովը մինչև 506թ. /Դվինի Ա ժողով/ արդեն մերժված էր Հայոց կողմից: Այդ ժամանակ Հայ Եկեղեցին արդեն որոշակի դիրքորոշում է ունեցել մի քննության և երկու քննության վարդապետությունների հանդեպ և ինչպես ողջ Քրիստոնյա Արևելքը, նաև կանգնել է հակաքաղկեդոնական դիրքերի վրա: Այստեղ ցանկանում ենք քննզծել, որ Հովհան Մանդակունի կաթողիկոսի ժամանակ Քաղկեդոնը ոչ թե պաշտոնապես նզովված էր, այլ Ջենոն կայսեր, , Հենոտիկոնր, , ոգով լուրջայն մերժված և դատապարտված:

ե/Հայոց հակաքաղկեդոնական դիրքորոշումն անգիտություն, Քաղկեդոնի դավանությունը միշտ չհասկանալու կամ ուրիշներից խաբվելու հե-

1. Աղոնց Ն., Մաշթոց և նրա աշակերտները քստ օտար աղբյուրներին, Կիևնա, 1925, էջ 44:
2. Տեր-Մինասյան Ե., Նեստորականությունը Հայաստանում, , Պատմա-բանասիրական հետազոտություններ, , Երևան, 1971, էջ 335-336:

տևանք չէր /քաղկեդոնական մի շարք աղբյուրներ, մխիթարյան հեղինակներ/, ոչ էլ՝ մյուսներից տարանջատվելու և սահմանազատվելու միտում /Լեո/: Այն մի կողմից ազգային մշակութային ինքնուրույնության և անկախության պահպանման միջոց էր, մյուս կողմից՝ դա համահունչ էր Արևելքի քրիստոսաբանական-աստվածաբանական քննունմանը և զաղափարաբանությունը:

Հայ Եկեղեցու Գ-է դդ. թեմական բաժանմանը վերաբերող գլխում ա/Առաջին անգամ փորձ է արվել ներկայացնելու Հայ Եկեղեցու թեմական բաժանման պատկերը Գ. զարում: Գրա համար կատարել ենք մի շարք եպիսկոպոսական ցանկերի ժամանակագրական մշակումներ՝ հիմնվելով հայ և օտար աղբյուրներին նորովի քննության վրա:

բ/Մի շարք եպիսկոպոսությունների անվանումների փոփոխությունը, նրանց միավորմամբ կամ տրոհմամբ /Տարոն-Տայք, Տարոն-Մամիկոնեից, Տայք-Քզնունից, Հարք-Մանազկետ, Բասեն-Մարդաղի և այլն/ փորձել ենք պարզել եկեղեցական թեմերի այս կամ այն ցանկի ժամանակային պատկանելությունը:

գ/Փորձել ենք պարզել Սյունյաց, Էլոյի /Այլի/, Առանի /Առնա/ եպիսկոպոսությունների ստեղծման ժամանակաշրջանը, Երուսաղիմ-Ուռուտակ-Առուտակ-Առան թեմի անվան գուլգուլությունը և տեղադրության խնդիրը: դ/Փորձել ենք բացատրել Ուխտանալի ցանկից հայտնի, Միսս Ասորեաց, , եպիսկոպոսություն /որին չեն անդրադարձել ոչ Աղոնցք, ոչ մյուս ուսումնասիրողները/ տեղադրությունը, մրա հետ կապված, Հայաստանի հարավ-արևելյան երկրամասերի՝ Դասնի, Մահկերտան, Նիխորականի թեմերի եկեղեցավարչական ենթակայածություն հարցը:

Ներկա աշխատանքը կարող է օգտակար լինել եկեղեցա-դավանական, եկեղեցավարչական, Հայ Եկեղեցու թեմական բաժանման հետ կապված՝ պատմա-աշխարհագրական վաղ շրջանի խնդիրներով զբաղվող մասնագետների համար, և այս իմաստով նաև՝ քարտեզագրական նյութերի կազմման գործում:

ՌԻՍՏԻՆԱՆՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսություն թեմայով կարդացվել են գեկուցումներ Հուլիանոսի շեռագրությունների Հայկական Գենտրոնի /ՀՀՀ/ 1994թ. հոկտեմբերին և 1995թ. ապրիլին կազմակերպած գիտաժողովներում, հրապարակվել են հոդվածներ, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում: Աշխատանքը քննարկվել է և երաշխավորվել պաշտպանության ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի, , Քրիստոնյա Արևելք, , բաժնում:

ԱՏԵՆԱՌՈՒՍՏԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՐԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից,



վերջաբանից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի կարևորությունը և այժմ-մեակնախնամությունը, սահմանված են ուսումնասիրության նպատակն ու հիմնական խնդիրները, բացահայտված է բարձրացված հարցերի ուսումնասիրվածության աստիճանը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունները:

ԳԼՈՒԽ ԼՈՒԱՅԻՆ . . . ԴԱՎԱՆԱԿԱՆ ՊԱՅԵԱՐԸ ՔՐԻՍՏՈՍՅԱ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՔԱՂԵԴՈՍԻ ԺՈՂՈՎԸ . . .

Սույն գլուխը բաղկացած է երկու մասից:

Մաս Ա., Դավանական պայքարը Ընդհանրական եկեղեցու ներսում, . . . վաղ միջնադարում բյուզանդացի աշխարհում, հատկապես Արևելքի եկեղեցական կյանքում կարևոր դեր էին խաղում աստվածաբանական երկու մեծ դպրոցները՝ Ալեքսանդրիայի և Անտիոքի, որոնց դավանաբանական հայացքների և վարդապետությունների տարբերությունները պատրիարքությունների մրցման հետ միասին պատճառ դարձան քրիստոնեական եկեղեցու բաժանման համար:

Բացի Ալեքսանդրիայի և Անտիոքի դպրոցների դավանական տարբերություններից, մեծ վեճերի պատճառ է եղել պատրիարքների մրցումն իրար հետ: Եթե Արևմուտքում, քրիստոնեական եկեղեցում իշխող դիրք էր զբաղեւել Հռոմի Աթոռը, ապա Արևելքում մրցակցում էին Ալեքսանդրիայի և Վ. Դուսի պատրիարքությունները, որոնց ձգտում էին հեղինակություն և գերիշխող դիրք ձեռք բերել Արևելքում և միանձնյա ղեկավարել եկեղեցական գործերը: Պատրիարքությունների այդ պայքարն իր հիմքում ուներ նաև քաղաքական ազդեցության ոլորտները և իրավասությունների քննդայնման միտումը:

325թ. Նիկեայի, 381թ. Վ. Դուսի, 431թ. Եփեսոսի ալեգերական ժողովներում հաղթանակից ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցի վարդապետությունները, որն Ալեքսանդրիայի Աթոռի հեղինակությունն ավելի ևս բարձրացրեց: Ալեքսանդրիայի պատրիարքները /Թեոփիլոս, Կյուրեղ, Գիոսկորոս/ ձգտում էին գերիշխող դիրքի Բրիստոնյա Արևելքում: Մակայն Ալեքսանդրիայի եպիսկոպոսների այդ ձգտումներին դեմ էր կանգնում Վ. Դուսի Աթոռը: 381թ. Վ. Դուսի Բ տիեզերական ժողովում քննուկնեց Գ կանոնը, ըստ որի այդ քաղաքի Աթոռը հայտարարվեց երկրորդը՝ Հռոմից հետո: Այդ վճիռն ուղղված էր Ալեքսանդրիայի դեմ, իսկ Հռոմը, զգալով Ալեքսանդրիայի Աթոռի վտանգավորությունը, աջակցեց Վ. Դուսի պատրիարքությունների բարձրացմանը:

Վ. Դուսի ժողովից հետո, հատկապես Ե դարում, քրիստոնեական եկեղեցին աչքեց մեծ ցնցումներ, ի հայտ եկան դավանանքներ և ուղղություններ, առաջացան եկեղեցիներ, որոնք պաշտպանություն գտան հարևան, անգամ ոչ քրիստոնյա տերությունների կողմից: Վերջիններս քրիստոնյաների դավանական տարբերություններն օգտագործում էին իրենց քաղաքական նպատակներին ծառայեցնելու համար: Այսպես, Եփեսոսի Գ տիեզերական ժողովում բանադրված և հալածանքների ենթարկված նեստորայությունները ստեղծեցին իրենց եկեղեցին: Թուրես դա առաջին եկեղեցին էր, որ ստեղծեցվեց Ընդհանրական եկեղեցուն զուգահեռ և զոյատեց, իհարկե, ոչ առանց քաղաքական պայմանների աջակցության: Պարսկաստանը պաշտպանեց և հովանավորեց նեստորականներին՝ ի հակադրում Բյուզանդիայի, հետագայում նաև՝ Հայաստանի, իր ազդեցությունն այստեղ ուժեղացնելու և Բյուզանդիայինը թուլացնելու նպատակով:

Այս ամենով հանդերձ, վաղ միջնադարում, քնականաբար, առաջնայինը դավանական տարածությունները և աստվածաբանական վեճերն էին: Գ-Ե դարերը դավանաբանական մեծ պայքարների դարերն էին: 325թ. Նիկեայի Ա տիեզերական ժողովն քննուկնեց Հավատո Հանգանակը, որտեղ բանաձևեց Քրիստոսի Աստվածությունը, Հայր Աստծո հետ նրա համագոյությունը և մշտնջենավորությունը խորհուրդը, որ կանաձևի տակ էր դրել Արիոսը: Այնուհետև, Վ. Դուսի Բ տիեզերական ժողովը նգովեց բոլոր այն աղանդավորներին՝ Մակեդոն, Փոտիոս, Ապոլինարիոս, որոնք ալեկոծել էին Ընդհանրական եկեղեցին: Մանրամասնությունների մեջ չխորանալով նշենք, որ Վ. Դուսի ժողովի որոշումներն առաջին հերթին ուղղված էին Մակեդոնի հոգեմարտից վարդապետության դեմ, որը չէր քննուկնեց Ս. Հոգու Աստվածությունը և համագոյությունը Հայր Աստծուն, դրանով մերժելով, ինչպես Արիոսը, Ս. Երրորդության համագոյություն խորհուրդը: Ս. Երրորդության ուսմունքն իր ամբողջացումը ստացավ Վ. Դուսի ժողովում և հատկապես երեք մեծ կապաղովկիացիները /Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի/ գործերում: , Մի էություն և երեք Անձինք, - սա է Ս. Երրորդության աստվածաբանության ուղղափառ ձևակերպումը:

Ե դարում վեճերը քրիստոնեական եկեղեցում նոր թափ առան Բրիստոսի քննության շուրջը: Բրիստոս-Աստվածամարդու էություն պրոբլեմը վաղմիջնադարյան դավանական վեճերի ողջ քննացքում դարձավ բանավեճի հիմնական առարկան: 431թ. Եփեսոսի Գ. Տիեզերական ժողովին նախորդած և հաջորդած տասնամյակների քննացքում ծավալված դավանական վեճերը Բրիստոսի մարդկային և Աստվածային քննությունների շուրջը, Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ մտել է , քրիստոսաբանական մեծ վեճ, , անու-



նով: Այս հարցի շուրջն էր հիմնականում Ալեքսանդրիայի և Անտիոքի աստվածաբանական դպրոցների պայքարը: Երկու դպրոցների բախումն իր գազախանութին հասավ Ալեքսանդրիայի պատրիարք Կյուրեղ Ալեքսանդրացու և Կ.Պոլսի պատրիարք Նեստորի դավանական մեծերում: Չմանրամասնելով նրանց ուսմունքները Քրիստոսի քննության և մարմնի, Որդու Անպականության, Մարիամին Աստվածածին համարելու վերաբերյալ, միայն նշենք այդ երկու դպրոցների բրիտոսաբանության հիմնական էությունները. ,,ինքը Աստվածն է մարդ դարձել,, , կամ ,,Մարդացյալ Աստված,, /Ալեքսանդրյան դպրոց/ և ,,Մարդ, որն աստվածացել է,, կամ ,,Աստվածացած, աստվածագեւս մարդ,, /Անտիոքի դպրոց/:

Այդ դավանական վեճերի արդյունքում նրեք տիեզերական ժողովները վճռեցին Քրիստոսի և Ս.Հոգու Աստվածությունը, սահմանեցին Ս.Երրորդություն երեք Անճեղ համագոյություն, Փրկագործություն և Մարդեղություն խորհուրդները:

Մաք. Բ. 22 Հայ Եկեղեցու դավանական դիրքերը շուրջն էր դարձում և Պղպարձի առաջին կեսին 22. Ինչպիսին էր Հայ Եկեղեցու ընթացող դիրքը քրիստոսաբանական ժամանակաշրջանում քրիստոսայա աշխարհում ծավալված դավանական այդ պայքարի մեջ:

Հայ Եկեղեցին չէր մասնակցում արիստական վեճերին, քնդհանրապես չէր դարձնում դավանական պայքարին: Արիստականությունը մուտք չգործեց Հայոց մեջ և դեռևս ոչ մի հոսանք, ոչ մի վարդապետություն անմիջապես նորեն չէր սպառնում իր դավանաբանությունը մշակող Հայ Եկեղեցու ոչ ինքնությունը և ոչ էլ ճեպագրվող հայացքներին: Լուռ հեռուելով Չ դարում բողոքված դավանական պայքարին, նա սկզբից ևեթ հարեց ալեքսանդրյան դպրոցի քրիստոսաբանական մեկնակերպին՝ իրեն հեռու պահելով Անտիոքի դպրոցից: Առաջին անգամ նեստորականությունը, որին աջակցում էր Պարսկաստանը՝ ի հակառակ Հայաստանը և Բյուզանդիայի, լուրջ սպառնալիքներ ստեղծեց Հայ Եկեղեցու համար: Հակվածությունն ալեքսանդրյան աստվածաբանությանը ավելի ևս շեշտվեց Եփեսոսի ժողովից հետո: Այն շրջադարձային էր ինչպես Արևելքի բոլոր եկեղեցիների, այնպես էլ՝ Հայ Եկեղեցու համար: Կյուրեղ-եփեսոսյան դավանանքը մեր եկեղեցին դարձրեց իր գենը քրիստոսանական տարբեր ուղղությունների և նորահայտ վարդապետությունների դեմ մղած պայքարում: Եփեսոսի տիեզերական ժողովին և նրա որոշումներին Հայոց արագ արժագանցելը պայմանավորված էր նեստորականության Հայաստան ներթափանցմամբ և նրա դեմ պայքարի անհրաժեշտությունը: Ինքը կարող համաձայնել Ե.Տեր-Մինասյանի այն կարծիքին, թե Ընդհանրական Եկեղեցու մեծ պայքարը Ե դարում

բողոքովին աննկատելի է անցել Հայ Եկեղեցու համար<sup>1</sup>: Ե դարի վերջին դավանական վեճերին Հայոց մասնակցություն հարցի մասին կլուսվի հաշորդ գլխում: Իսկ դարի առաջին կեսին Հայոց Սահակ հայրապետի, Մաշտոցի թղթակցությունները Կ.Պոլսի Պրոկոպ պատրիարքի, Մելիտիների Այակիոս և Եղեպատի Բաբուլաս կաթոլիկոսների հետ դավանանքի հարցերով, այսպես ինչպես այն բանի, որ Հայ Եկեղեցին Ե դարի հենց սկզբից անտարբեր չէր դավանական հարցերի նկատմամբ և դավանական պայքարն Ընդհանրական Եկեղեցու ներսում, հատկապես Եփեսոսի տիեզերական ժողովից հետո աննկատ չի անցել մեր եկեղեցու համար: Իսկ Կ.Տեր-Մարտիրոսյանը գրում է, թե քաղաքական պայմանների և իրադրության պատճառով Հայ Եկեղեցին առիթ չի ունեցել զբաղվելու դավանական խնդիրներով, որոնցով ալեկոծված էր Ե դարի ամբողջ քրիստոսայա աշխարհը<sup>2</sup>:

Այնինչ, հենց քաղաքական պայմանները ստիպեցին Հայոց մասնակցությունը նեստորական վեճերին, հետևապես և դավանական պայքարին: Հալածվելով կայսրությունում, նեստորականներն ամբարշտվեցին Պարսից երկրում, որտեղ շուտով նեստորական դավանանքը հուշակվեց որպես Պարսից եկեղեցու պաշտոնական դավանանք: Պարսից արքունիքը նեստորականների միջոցով ձգտում էր նախ՝ իր տերություն սահմաններում ապրող քրիստոսյաններին և հատկապես հայերին հակադրել կայսրության քրիստոսյաններին, և այս՝ իրեն ենթարկել Հայ Եկեղեցին: Իրանով էր պայմանավորված մեծ Հայքի հարավում և հարավ-արևելքում նեստորական ստորի տարրի վերաբանակցումը՝ ի հակառակ հայ բնակչության: Ինչքան թուլանում էին հունական հողերում նեստորի կողմնակիցները, այնքան գործնում էին նրանց Պարսից իշխանության տակ<sup>3</sup>, վայելելով մանավանդ Պերոզ թագավորի /457-484/ հովանավորությունը: Այդ շրջանին է վերաբերում նաև Մրծ-բինի մետրոպոլիտ նեստորական Բարձուժմայի գործունեությունը Հայաստանի հարավային և հարավ-արևելյան երկրամասերում<sup>4</sup>: Հետևաբար, մեր եկեղեցին պատճառներ ունեցր դիմապայելու նեստորականներին և այդ շրջանում ապավինելու Կ.Պոլսի Աթոռի օգնությունը: Արշակ Տեր-Միքելյանի այն մտավախությունը, թե Հունաց հորինածն է, որ հայերը դիմել են

1. Տեր-Մինասյան Ե., Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորուց եկեղեցիների հետ, էջ 63:
2. Տեր-Մարտիրոսյան Կ., Հայոց եկեղեցու պատմություն, մաս Ա, Վաղ-պատ, 1908, էջ 186-191:
3. Աղոսց Կ., Կշվ. աշխ., էջ 53-54:
4. Գիրք թղթոց, էջ 334: Թովմա-Արծրունի, Պատմություն տանն Արծրունեաց, Ս.Պետերբուրգ, 1887, էջ 80-81:



օտար՝ ավյալ դեպքում Կ.Պոլսի եկեղեցու օգնութեանը և որ հայերն առանց Բյուզանդիայի չեն կարող կողմնորոշվել դավանանքի հարցերում<sup>1</sup> /կապված լատին սարկավագ Էիբերատուսի վերջուլթյան<sup>2</sup> և Գրոկդի ու Սահակ-Մաշտոցի թղթակցութեաննների հետ, որոնք համարել է կեղծ/ ոչ մի հիմք չունի: Դա պայմանավորված էր վերը նշված պատճառներով, երբ քավական ուժաղ ազդեցութեան և դիմադրութեան կար այդ ժամանակ Հայաստանում քնդդեմ եփեսոսի:

Հետևաբար, Հայ եկեղեցին մերժեց նեստորական վարդապետութունը ոչ թե Ընդհանրական եկեղեցու համընդհանուր շահերից ելնելով կամ երեք տիեզերական ժողովների որոշումներին հավատարիմ մնալու պարտադրանքից, այլ Պատից ոտնձգութեանններից պաշտպանվելու, պարսից քաղաքականութեանը կրել չզնալու և իր ինքնուրույնութեանը պահելու համար: Դա Անտիոքի դպրոցի աստվածաբանութեան մերժումն էր միաժամանակ և Ալեքսանդրյան վարդապետութեան դիրքերի վրա կանգնելու առաջին քայլը: Սահակ-Մաշտոցի թղթակցութեաննները Կ.Պոլսի Գրոկդ պատրիարքի հետ և հույն եկեղեցու օգնութեանն ապավինելը լրջամասվորված էին այդ գործոններով:

ԳԼՈՒԿՅԵՐԿՐՈՐԴ. ,,ՔԱՂԿԵԴՈՍԻ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅ ԻՆԵՂԵՑԻՆ,,:

Երկրորդ գլուխը բաղկացած է երեք մասից:

Մաս Ա. շարժանական պայքարը Ընդհանրական եկեղեցու ներքում և Բրիտանյա Արևելքը Քաղկեդոնի ժողովից մինչև 2-րդի առաջին քառորդը, ընդհանուր 9 տիեզերական ժողովից հետո Ալեքսանդրիայի Աթոռի ղեկավար Արևելքում ավելի ևս բարձրացավ և Քաղկեդոնի ժողովի նախորդին հասավ իր զազաթնակետին: Հոռմը, որ միշտ հետամուտ էր իր ազդեցութեան ուժեղացմանը Արևելքում, չէր կարող հանդուրժել Ալեքսանդրիայի վերելքը: Կ.Պոլսի Աթոռը, ինչպես նաև Անտիոքը միջոցներ էին որոնում Ալեքսանդրիայի հաղթարշավը և նրա եպիսկոպոսների գերաշխանական ժողովումներ կատարելու համար: Եվ կրկին, աննկատ ձևով, իրար դեմ են կանգնում երեք հզոր պատրիարքութեանններ՝ մի կողմից Ալեքսանդրիայի, մյուս կողմից՝ Կ.Պոլսի և Անտիոքի: Հոռմը գիտեր ում կողմը կանգնեք, բանզի ,,Բիւզանդիոնը Հոռովի օգնութեանն էր կարօտ, Հոռովն էլ՝ Բիւզանդիոնի,,<sup>3</sup>: Այս լարվածութեանը պիտի պարավեր, այս անորոշու-

1.Տեր-Միքելյան Ա., Հայաստանայց եկեղեցին եւ Բիւզանդեան ժողուց պարագայը, Մոսկուա, 1892, էջ 38-39:  
 2. J.-P. Migne, Patrologiae Cursus Completus, series latina, t. 68, pp. 963-1052.  
 3.Տեր-Մինասյան Ե., Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ.Ա, էջմիածին, 1908, էջ 326:

թյունը պիտի պարզվեր, և ինչպես միշտ, պատրիարքութեանններն իրենց հակառակութեաննները պիտի լուծեին արտաքուստ դավանաբանական-աստվածաբանական վեճերի քողի տակ:

Ընդհարման առիթը Կ.Պոլսի վանքերից մեկի վանական Եվտիմի վարդապետութեանն էր կամ ինչպես քնդուրված է ասել՝ ,,ցվտիքայան վեճերը,,: Եվտիմի Եվտիմի Եվտիմի մոնոֆիզիտ վարդապետութեանը, որը ոչ մի կայ չունէր: Կյուրեղ-ալեքսանդրյան քրիստոսաբանութեան հետ, առիթ էր Հոռմի համար մի նոր դավանութեանը հակադրվելու ալեքսանդրյան վարդապետութեանը: Դա լավագույն միջոցն էր Ալեքսանդրիայի Աթոռի դերն Արևելքում սահմանակալելու համար: 449թ. հունիսի 13-ին Հոռմի Լեոն Ա պապը Կ.Պոլսի Փլաքիանոս պատրիարքին մի դավանաբանական նամակ գրեց, որը հայանի է Լեոնի Տոմար /Տոմար/ անունով: Հսորանալով դավանական մանրամասների մեջ, նշենք, որ այն Արևմուտքի դավանական քաշտոնական մերժեցումն էր Անտիոքի վարդապետութեանը: 451թ. Քաղկեդոնի ժողովում Հոռմն քնդուրեց ավելի իր վարդապետութեանը, որը լույս հաստատում էր Լեոնի Տոմարի: Քաղկեդոնում ավելի ևս շեշտվեց աստվածաբանական վեճերի թիկունքում քողարկված քաղաքական շահերի առաջնությունը: Արևելքը, քնականաբար, չէր կարող հանդուրժել Հոռմի այդ նկրտումները: Դրան չհամակերպվելու արտահայտութեանն էր հակաքաղկեդոնական պայքարը ալեքսանդրյան-եփեսոսյան միաբանական վարդապետութեանը ոչի ներքո: Հակաքաղկեդոնական պայքարի քնթացքում ձևավորվեցին արևելյան ազգային եկեղեցիները /հայկական, ասորական, ղպտական/, որոնք քնտրեցին ինքնուրույն մասապարհներ: Քաղկեդոնի ժողովը պատճառ դարձավ Ընդհանրական եկեղեցու պառակտման համար և ամեն մի եկեղեցի այլևս ինքը պետք է հանդես գար իր քնտրած ուղու պաշտպանութեամբ:

Շատ ավելի ուշ, 553թ. Կ.Պոլսի հինգերորդ տիեզերական անվանված ժողովում, Հուստինիանոս Ա փորձելով իր կողմը գրավել միաբանակներին, դատապարտեց այսպես ոչված ,,երեք գլուխներին,, /Միսիսիայի եպիսկոպոս Իբասին, Կյուրոսի եպիսկոպոս Թեոդորոս Կյուրոսցուն և Թեոդոս Մոպսուեստացուն/, որպես նեստորականութեան պարագլուխներ: Արանք չէին դատապարտվել Քաղկեդոնի ժողովում և այդ փաստը հատուկ ուշադրութեան է արժանացել թե հայ, թե օտար հակաքաղկեդոնիկ հեղինակների կողմից: Սակայն Հուստինիանոսի այդ քայլն այլևս անկարող էր կրկին միավորել պառակտված եկեղեցին:

Մաս Բ. շարժանական պայքարը Ընդհանրական վարդապետութեանն և Գաղաղական նախադրյալները, ժամանակի երկու մեծ տերութեաննները՝ Բյուզանդական կայսրութեանը և Պարսկաստանը, ավանդաբար մեր-



ցակցել են Հայաստանը նվաճելու համար: Այդ նպատակի իրագործման համար քաղաքական և ռազմական միջոցներից զատ օգտագործվում էին կոռուպցիան, եկեղեցա-դավանական մշտումներն ու պարտադրանքները: Եվ դա պատահական չէր: Եկեղեցին և դավանանքը միջնադարի քաղաքական կարևոր գործոններ էին, իսկ Հայոց համար ինքնուրույնության պահպանման հրգոր միջոցներ: Այս իմաստով Հայ եկեղեցու համար դավանանքի պաշտպանությունը միևնույն ժամանակ նաև ազգային-մշակութային ինքնուրույնության ու անկախության պաշտպանությունն էր: Մյուս կողմից, Հայ եկեղեցու դավանական դիրքորոշումը համահունչ էր ոչ միայն բուն ազգային շահերին, այլև Քրիստոնյա Արևելքի քրիստոսաբանական-աստվածաբանական քմբունումներին և զաղափարաբանությանը: Հետևաբար, Հայ եկեղեցու դավանանքի ձևավորումն քննարկել է երկու՝ կոնկրետ պատմական ժամանակաշրջանի իրադրության ու պայմանների թելադրած և զաղափարական ուղիներով: Այդ երկու գործոններն էլ էական նշանակություն են ունեցել Հայ եկեղեցու դավանական դիրքորոշման մշտման գործում:

Քաղկեդոնի մերժումը և եկեղեցական սահմանազատումը չպետք է դիտել միայն հայ իրականությանը բնորոշ երևույթ: Այս կարծիքը եղել է անցյալում, կենսունակ է նաև այսօր: Թրինակ, Լեոն գրում է, թե Քաղկեդոնի մերժումը Հայաստանին ընդհանրացրեց կղզիացում, մի կողմից քաղաքական անօգնականություն և մյուս կողմից՝ խոր ինքնամոռիություն ազգային-մշակութային տեսակետից<sup>1</sup>: Քայց Հայաստանը մենակ չէր իր այդ վիճակում: Զարադրանքի քննարկումը քաղմիցս նշել ենք, որ ողջ Արևելքը չհամակերպվեց Քաղկեդոնի ժողովին. ոչ նրա դավանությանը, որ ընդորոշվեց նոր էր Արևելքի համար, և ոչ էլ Հռոմի քաղաքական ու եկեղեցական զեռիշխանական միտումներին, որ թաքնված էին Քաղկեդոնի քրիստոսաբանական բանաձևումների հետևում: Քաղկեդոնը պատճառ դարձավ ոչ միայն Հայ եկեղեցու՝ Ընդհանրական եկեղեցուց անջատման, այլ քնդհանրապես քրիստոնեական եկեղեցու պատկանման համար: Անգամ Աստիոքը, որ միշտ Ալեքսանդրիայի հակառակորդն էր և դավանական պայքար էր մղում նրա դեմ, չհաշտվեց Քաղկեդոնի որոշումներին և նոր վարդապետությանը: Ե-Ջ դդ. հակաքաղկեդոնական դավանական պայքարի հիմնական ծանրություններն իրենց ուսուցիչի վրա են տարել հույն, ասորի, ղպտի աստվածաբանները: Բացի այդ, Հայ եկեղեցին երբեք առաջինը չմերժեց Քաղկեդոնի ժողովը և վարկեց այնպես, ինչպես ընդունված էր ժամանակի Քրիստոնյա Արևելքում: Նա մինչև 554թ. /Դվինի Բ ժողով/ պաշտոնապես չնզովեց Քաղկեդոնը, այլ՝ 1. Լեոն, Հայոց պատմություն, Երկ. ժող., Գ. Բ, Գիրք առաջին, Երևան, 1967, էջ 94:

Ջենոն կայսեր,, Հենոտիկոնի,, /,, Միուլթյան զիր,, / մզով լուելյայն դառապարտեց նոր վարդապետությունը:

Մաս Գ. շշ Հայ եկեղեցու դավանական դիրքորոշումը Ե դարի վերջին և Ջ դարի սկզբին,, Երբվանի՞ց է Հայ եկեղեցին մասնակցել Ընդհանրական եկեղեցու ներսում ծավալված դավանական, քաղկեդոնական վեճերին և ե՞րբ է Հայ եկեղեցին իր դիրքորոշումը պարզել Քաղկեդոնի ժողովի հանդեպ ու մերժել այն: Այս հարցը, որը կապված է հույն աստվածաբան Տրիմոթեսու Կուզի,, Հակաժողովության,,<sup>1</sup> երկի հայերեն թարգմանության ժամանակի մշտման հետ, իր մեջ ընդգրկում է նաև հայ պատմագիտության, բանասիրության և փիլիսոփայության պատմության այնպիսի մի կարևոր խնդիր, ինչպիսին հունարան դպոցի և հունարան թարգմանությունների սկզբնավորման շրջանն է ու ժամանակագրությունը:

Սահակ-Մարտոցից սկիզբ առած դավանական պայքարին Հայոց մասնակցությունն իր սրտաբանական շարունակությունը ստացավ քաղկեդոնական վեճերում: Ուսումնասիրողների մի խումբ /Ն. Ալիխյան, Ս. Տեր-Մինասյան, Մ. Օրմանյան, Չ. Մանանդյան, Գ. Անանյան/ գտնում է, որ Քաղկեդոնի ժողովի հետ կապ ունեցող վեճերին Հայ եկեղեցին իր մասնակցությունն է ունեցել սկսած Ջ դարի կեսերից՝ Դվինի 554թ. Բ ժողովի ժամանակ՝ Ներսես Բ կաթողիկոսի օրոք /548-557թ./: Ծարադրանքում աղբյուրների քննությամբ փորձել ենք ապացուցել, որ այդ վեճերին Հայ եկեղեցին մասնակցել է Ե դարի վերջերին՝ Հովհաննես Ա Մանդակունի կաթողիկոսի օրոք /478-490/: Ջ դարի կեսերից առաջ, անգամ մինչև 550-ի Դվինի Ա ժողովը, Հայ եկեղեցին որոշակի դիրքորոշում է ունեցել Քրիստոսի բնությունների վերաբերյալ վեճերի հանդեպ, և ինչպես ողջ Քրիստոնյա Արևելքը, նաև կանչվել է հակաքաղկեդոնական դիրքերի վրա՝ միաժամանակ նզովելով նվտիքներն: Այդ օրակետն են պաշտպանել Գ. Տեր-Մկրտչյանը, Գ. Տեր-Մկրտչյանը, Մ. Աբեղյանը, Ս. Արևշապյանը: Ե դարի 50-ական թթ.-ին Հովհան Ա Մանդակունի կաթողիկոսի օրոք հայերեն է թարգմանվել Տրիմոթեսու Կուզի /Էլուոտս/ հակաքաղկեդոնական, հակաստորակյան,, Հակաժողովությունը,,: Մասնակցների կաթողիկոսի օրով էլ քնդունվել է Ջենոն կայսեր՝ Քաղկեդոնը լուելյայն մերժող,, Հենոտիկոնը,,: Վերջինիս ռզով Մովսես Խորենացին և Մանդակունին գրել են իրենց հայտերի թղթերը քնդդեմ երկարնակության:<sup>2</sup>

Տեր-Մինասյանի այն փաստարկը, թե անիմաս է խոսել այն մասին, որ Է. Երմոթեսի Երբնկոտոսապետի Աղեքսանդրեայ, Հակաժողովին առ սահմանական ի ժողովոյն Քաղկեդոնի, էջմիածին, 1903: 2. Գիրք Թղթոց, էջ 22-23, 29-40:



Հովհան Մանդակունին քնդուներ է Քաղկեդոնը մեղմորեն շրջանցող և լքուել յայն դատապարտող , , Հենտոսիոնը , , և միևնույն ժամանակ նա թարգմանել է ավել Տիմոթեոս Կուզի բացահայտ հակաքաղկեդոնական , , Հակամատու-թյունը , ,<sup>1</sup>, կարծում ենք խիստ վիճարկելի է? Իսկ Պ. Անանյանը գրում է; Ձե Տիմոթեոսի գործի թարգմանությունը նշանակում է Հայ Եկեղեցու պաշտոնական դիրքորոշման բացահայտում Քաղկեդոնի հանդեպ թարգմանության րականացման շրջանում<sup>2</sup>: Մենք հակված ենք այն մտքին, որ Մանդակունին և քնդուներ է , , Հենտոսիոնը , , որպես Հայ Եկեղեցու պաշտոնական դիրքորոշման արտահայտություն, և նրա օրոք, անգամ նրա գիտությունը խղճմանվել է բացահայտ հակաքաղկեդոնական Տիմոթեոսի գործը: Սակայն լրանից չպետք է ենթադրել, թե Տիմոթեոսի երկի թարգմանությունը Հայ Եկեղեցու պաշտոնական դիրքի արտահայտությունն էր: Պետք է այստեղ տարբերել պաշտոնական դիրքորոշումը, այդ դիրքորոշման արտահայտումը և այն, ինչ կատարվում և մեկնաբանվում է պաշտոնականից դուրս: Օրինակներ, այն էլ շատ խոսուեն, մենք արդեն ունենք: Այսպես, Ալեքսանդրիայի և Կ. Պոլսի պատրիարքներ Պետրոս Մոնզոսի և Ալակիոսի թղթակցություններում<sup>3</sup> բացահայտորեն նզովվում է Քաղկեդոնի ժողովը և Լևոնի Տուժարոք: Հիշենք, որ Պետրոս Մոնզոսն ու Ալակիոսն են , , Հենտոսիոնի , , հեղինակները, սակայն դա չի խանգարել, որ իրենց նամակներում, պաշտոնականից դուրս, հենց ձեռնոն կայսեր աչքի առաջ բացահայտ հակաքաղկեդոնական դիրքորոշում արտահայտեն: Եվ եթե այդ մեով են վարվել Բյուզանդիայում, եթե այդպես են վարվել Եգիպտոսում և նաև միաբնակ ասորական միջավայրում, ապա ինչու՞ այդ կերպ չպետք է վարվեին նաև Հայոց մեջ: Հետևաբար, այստեղ , , անտեղի, արտաոց և հակասական , , ինչպես կարծում են այդ հեղինակները /Ծ. Տեր-Մինասյան, Ն. Ալիսյան, Պ. Անանյան/, ոչինչ չկա:

Հայ Եկեղեցու պատմության, նրա դավանական դրուժյան հստակեցման և՛ զարգացման համար երևույթ էր 506թ. Փարզեն Ա Ոթմսեցի կաթողիկոսի /491-516թթ./ օրոք գումարված Գվինի Ա ժողովը:

, , Գիրք թղթոց , , -ում պահպանվել է երկու թուղթ՝ միևնույն վերնագրով

1. Տեր-Մինասյան Ծ. , Տիմոթեոս Կուզի , , Հակամատուժիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի , , երկի թարգմանության ժամանակը , , Պատմա-բանասիրական հետազոտություններ , , , էջ 403-409:

2. Անանյան Պ. , Պատմական յիշատակարան մը Գուլիսի Բ ժողովրի մասին , , Բազմավէպ , , , 1958, ժ՛ 3-5, էջ 122:

3. Գիրք թղթոց , էջ 243-276:

/ , , Թուղթ Հայոց ի Պարսս , առ ուղղափառս , ,<sup>1</sup>/, որոնցից մեկը ժողովական /Գվինի Ա ժողովից/, որոնք թույլ են տալիս պարզելու Հայ Եկեղեցու պաշտոնական դիրքորոշումը դավանական հարցերում և զարի սկզբքին և նրա տեղն ու դեղն Արևելքի եկեղեցիների մեջ:

Ո՞րն էր Գվինի 506թ. ժողովի և Փարզեն Ա Ոթմսեցի կաթողիկոսի այդ երկու թղթերի նշանակությունը Հայ Եկեղեցու համար:

Նախ, Գվինի Ա ժողովը մի տեսակ հանրագումարն էր նախորդ տասնամյակներում Հայ Եկեղեցու դավանական դիրքորոշման ճշման և այն պայքարի, որ նա մղում էր դուրս իրեն պարտադրվող քրիստոնեական տարբեր դավանանքների՝ նեստորականության, քաղկեդոնականության, եվտիքականության դեմ:

Երկրորդ, , , Թուղթ Հայոց ի Պարսս , առ ուղղափառս , , Ա թուղթը Հայ Եկեղեցու հնագույն դավանական գովածքն է, որ ժողովական և պաշտոնական տեսք ունի, առաջին ժողովական ոռոշումն է /համեմայն դեպս մեզ հասած/, որով նա բացահայտ կերպով նզովում է նեստորականությունը:

Երրորդ, առաջին անգամ ժողովական, կանոնական ձևով մերժվում և դատապարտվում է Քաղկեդոնի ժողովը՝ համաձայն ժամանակի տիրող մտայնության:

Չորրորդ, , , Թուղթ Հայոց ի Պարսս , առ ուղղափառս , , Բ թղթում առաջին անգամ հայ դավանական գովածքներում նզովվում է եվտիքեցը: Դա նշանակում է, որ Հայ Եկեղեցին շքնդուներով Քաղկեդոնը, հենց սկզբի մերժել է նաև եվտիքեցի ծայրահեղ միաբնակ վարդապետությունը և Քաղկեդոնը մերժել է ոչ թե եվտիքականության, այլ՝ կյուրեղ-եփեսոսյան դավանության դիրքերից:

Հինգերորդ, Հայ Եկեղեցու հեղինակության և դիրքի ամենացայտուն օրինակն է Գվինի Ա ժողովը և զարի Քրիստոնյա Արևելքում՝ դավանական վեժերի ծավալման ամենաբարդ ժամանակաշրջանում: Ասորական տարբեր եկեղեցիները՝ միաբնակ և նեստորական, հետագայում հուլիանական և սևերյան-հակադեզյան, գիտակցելով Հայ Եկեղեցու նշանակությունը և դերը Արևելքի եկեղեցիների մեջ, չեն կամեցել խզել իրենց կապերը նրա հետ, դիմել են մեղ եկեղեցուն, աշխատել են գրավել իրենց կողմը և տեսնել նրան իրենց դավանակից: Իսկ վրաց և Աղվանից եկեղեցիների ներկայացուցիչները հավաքվել էին Գվինում Հայ Եկեղեցու նախազահությունը ու զահեղեցուժյամբ՝ միանական դավանական դիրքորոշումը համաձայնեցնելով մեղ եկեղեցու հետ:

Սահակ-Մաշտոցից սկիզբ առած զաղտիարական, կրոնա-դավանական ավելի 1. Գիրք թղթոց , էջ 41-47, 48-51:



քան հարյուրամյա պայքարը, որ տանում էր Հայ Եկեղեցին, հող նախա-  
պատրաստեց 554թ. Պփինի Բ ժողովում Բաղկեդոնը բացեիբաց նգովելու և  
պաշտոնապես իր հարաբերությունները բյուզանդական եկեղեցուց խեղելու  
համար:

Գլուխը ԵՐՐՐԻՒՄ՝, , ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՔԵՄԱԿԱՆ ԲԱՃԱՆՈՒՄԸ Գ-Է ԴԱՐՆ-  
ՐՈՒՄ՝, ,

Ատենախոսության վեցշին գլխում փորձ է արվել տալու Հայ Եկեղեցու  
թեմական բաժանման պատկերը, վաղ շրջանում, բնավել է երկրի քաղաքա-  
կան վիճակի, եկեղեցական և քաղաքական իրադարձությունների, քրիստո-  
նեության Հայաստան ներթափանցման ուղիների, քրիստոնեական սկզբնական  
համայնքների և այլ հանգամանքների ազդեցությունը եպիսկոպոսություն-  
ների առաջացման տեղի և ժամանակի, բանակի, եկեղեցու վարչատարածքա-  
յին կառուցվածքի փոփոխության վրա՝ կատարված սկզբնաղբյուրների արվ-  
յալներով և քննություններ:

Երրորդ գլուխը բաղկացած է ե կու մասից:

Մաս Ա. , , Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Գ դարում, , . Բնելով

տարբեր աղբյուրներում, թղթերում, եկեղեցական ժողովների արձանագրու-  
թյուններում հանդիպող հայ եպիսկոպոսությունների վերաբերյալ ցուցակ-  
ները, ուղղակի և անուղղակի վկայությունները, ուշադրություն ենք  
դարձրել այն օրինաչափության վրա, որ քրիստոնեության քննության  
վերջնական շրջանում եկեղեցական թեմեր հիմնվեցին հիմնականում Հայաս-  
տանի արևմտյան, հարավ-արևմտյան և հարավային շրջաններում ու զա-  
վառներում: Հատկապես Մեծ Հայքի այդ երկրամասերում առաջին եպիսկո-  
պոսությունների հիմնումը Գրիգոր Լուսավորչի կողմից բացատրել ենք  
երեք գլխավոր պատճառներով. 1/Մինչ Հայոց պաշտոնական դարձը Բ-Գ դա-  
րերում քրիստոնեական համայնքների, եկեղեցիների ու մատուռների գո-  
յությունն էր այդ զավառներում /ժողով, Աշտիշատ, Եկեղիք, Գարաաղի,  
Գերշան, Աղձնիք, Կորդուր/ : 2/Դա կապված էր Հայաստան քրիստոնեու-  
թյան մուտքի հետ, որը տեղի ունեցավ երկու մասնապարհով. ա/հարավից՝  
Նդեմիայից և Ասորքից, Բ/արևմուտքից՝ Կասպղովկիայից և Փոքր Հայ-  
քից: 3/Մեծ Հայքի արևմտյան և հարավ-արևմտյան երկրամասերը նախաքրի-  
ստոնեական շրջանում առավել հայտնի նշանավոր հեթանոսական կենտրոններն  
էին՝ իրենց սրբատեղիներով և մեհյաններով /Աշտիշատ, Եկեղիք, Գարաա-  
ղի, Աղձնիք/ : Հեթանոսությունն արմատախիլ անելու և նոր կրոնը ժողո-  
վորդի մեջ տարածելու, երկրում առմատավորելու համար հեթանոսական  
պաշտամունքի հենց այդ կենտրոններում էլ ստեղծվեցին առաջին եպիսկո-  
պոսությունները:

Ելնելով վերը թվարկած պատճառներից և հիմնվելով հայ և օտար աղբ-  
յուրների /Ազաթանգեղոս, Փալստոս Բուզանդ, Կորյուն, Ղազար Փարպեցի,  
Եվսեբիոս Կեսարացի/ վկայությունների վրա, մեր կարծիքով Գ դարում  
Հայաստանյայց Աթոռին պատկանող թեմեր գոյություն ունեին Այդարատում,  
Բասենում, Բագուանդում, Տայբում, Վանանդում, Եկեղիքում, Գերշանում,  
Գարաաղիում, Տարնում, Բզնունիքում, Ծոփքում, Կարնում, Ապեռում,  
Մաղնազների երկրում, Գաղատուն գավառում, Խոռձեհակում, Արշամու-  
նիքում, Աղձնիքում, Մանազկերտում /Հարո/, Կորդուրում:

Այստեղ խոսքը ոչ թե քննադատելու քան թեմերի մասին է, այլ այն գա-  
վառների և երկրամասերի, որտեղ Գ դարում գոյություն են ունեցել եկե-  
ղեցական թեմեր: Քանզ կարող էր դառնալ /և այդպես էլ է/ քանակից,  
քանակից և այլն: Դա բացատրվում է նրանով, որ որոշ եպիսկոպոսու-  
թյուններ, որոնք միավորված էին մեկ թեմի մեջ, տարբեր ժամանակներում  
տրոհվում էին և կազմում առանձին թեմեր: Այսպես, Ազաթանգեղոսի մոտ  
Եկեղիքը և Գերշանը կազմում են մեկ թեմ, մինչդեռ Բուզանդի, Կորյու-  
նի և Փարպեցու մոտ նրանք արդեն առանձին թեմեր են: Նույնը կարելի  
է ասել նաև Տարնի և Տայբի, Տարնի և Բզնունիքի մասին: Տարնը և  
Տայբը Ազաթանգեղոսի, , Ս.Գրիգորի վտրի, , հունարեն խմբագրության  
մեջ, իսկ Տարնը և Բզնունիքը արաբերեն խմբագրությունում նշված են  
միասին և կազմում են մեկ թեմ՝ որպես Մամիկոնյան նախարարական տան  
եպիսկոպոսություն: Այնինչ, Բուզանդի /նաև Փարպեցու/ մոտ նրանք նրջ-  
ված են որպես առանձին թեմեր:

Մաս Բ. , , Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Ե-Է դարերում, , .  
387թ. բաժանումը փոփոխությունները մտցրեց նաև Հայ Եկեղեցու վարչա-  
տեսածքային կառուցվածքի մեջ: Մեծ Հայքի արևմտյան /Հունայ/ մասի թե-  
մերի՝ որպես Հայ Եկեղեցու պատկանողների, մասին այլևս չկան հիշա-  
տակություններ: Հայաստանի կայսերական մասի եպիսկոպոսությունները՝  
Գերշանի, Եկեղիքի, Գարաաղիի, Ապեռի, Կարնի, Ծոփքի, Գաղաճան,  
387-ի բաժանումից հետո այլևս չէին պատկանում Հայաստանյայց Աթոռին  
/Փոքր Հայքը վաղուց էր կայսրության ենթակայության տակ և եկեղեցա-  
վարչական տեսակետից ևս ենթարկվում էր նրան/: Հեռուաբար, եկեղեցական  
ժողովների արձանագրությունները կամ եպիսկոպոսությունների վերաբե-  
րյալ մեծ պատմիչների մեջբերած ցանկերը թերի են ոչ թե այն առումով,  
որ չկան Հայաստանի կայսերական մասի թեմերի ներկայացուցիչները, այլ  
նրանով, որ Հայաստանյայց Աթոռին պատկանող ոչ բոլոր թեմայալ եպիս-  
կոպոսներն են հիշվում կամ մասնակցել այս կամ այն եկեղեցական ժողո-  
վին:



591թ. Հայաստանի երկրորդ բաժանումը թվում է փոփոխություններ պետք է մտնեն Հայ Եկեղեցու նվիրատեական դասակարգման մեջ: Սակայն բաժանումից հետո Բյուզանդիային անցած շրջանների թեմերը աղբյուրների վկայությամբ<sup>1</sup> շարունակել են պատկանել Հայաստանյայց Աթոռին:

Հայ եպիսկոպոսություններին վերաբերող առևտանեսյան ցանկը<sup>2</sup> համեմատած մյուս աղբյուրների, բավարար տեղեկություններ է տալիս Հայ Եկեղեցու Ե-Ն դարերի թեմերի վերաբերյալ: Չնայած Ուխտանեսն այդ ցանկը /երեսուն թեմ/ վերագրում է Լուսավորչի ժամանակաշրջանին, ավելի միշտ\* հենց Գրիգոր Լուսավորչի կողմից հիմնված, սակայն նկատի ունենալով այդ ցանկում եղած մի շարք թեմերի /Էլոյի, Սոանի, Սյունյաց/ առաջացման ժամանակաշրջանը, մի քանիսի անվանումների փոփոխությունները /Հարթ-Մանազկերտ, Տարոն-Մամիկոնեից, Բզունեից և այլն/ և ամենակարևորը\* կայսերական մասի թեմերի բացակայությունը, մեր կարծիքով հայ եպիսկոպոսությունների ուխտանեսյան ցանկը չէր կարող վերաբերվել Դ դարին, առավել ևս\* Լուսավորչի ժամանակաշրջանին: Հաշվի առնելով վերը թվարկած պատժաները, մեր կարծիքով Ուխտանեսն ցանկը վերաբերում է 2 դարի վերջին և 3 դարի սկզբին /քստ Ադոնցի\* է դարի վերջին և Ը դարի սկզբին<sup>3</sup>/: Դա նաև այն ժամանակաշրջանն էր, երբ Վրաց Եկեղեցին բաժանվեց Հայ Եկեղեցուց: Ուխտանեսն աշխատությունը նվիրված է հիմնականում 2 դարի վերջին և 3 դարի սկզբին Հայ, Վրաց և Աղվանից եկեղեցիների փոխհարաբերություններին, դավանական պայքարին: Այդ ցանկում ներկայացված է Հայաստանյայց Աթոռին ենթակա թեմերի այդ շրջանի, կարելի է ասել լրիվ ցուցակը: Հայ Եկեղեցու թեմերի նման քնդգրկուն ցանկի այլևս չենք հանդիպի ոչ մի պատմիչի մոտ, ոչ մի ժողովի արձանագրությունում: Դա արվել է շեշտելու Հայ Եկեղեցու նըշանակությունը, մեծությունը, տեղն ու դերը արևելյան եկեղեցիների մեջ: Իսկ բոլոր եպիսկոպոսությունների առաջացումը վերագրելով Գրիգոր Լուսավորչին, հայ պատմիչը ցանկացել է բոլոր թեմերին հին ծագում վերագրել, անգամ փորձելով այդ ցանկը համապատասխանեցնել Ազանգեղոսի տվյալներին:

Ուխտանեսնի եկեղեցական թեմերի ցանկում չկան նախորդ ցանկերից հայանի միայն Մարդպետական և Սեպհական եպիսկոպոսությունները: Ըստ Ադոնցի, դրանք համանիշ են, կազմում են մեկ թեմ: Տարբեր ցանկերում

- 1. Գիրք թղթոց, էջ 146-147, 149, 151 և այլն:
- 2. Ուխտանեսն եպիսկոպոսի Պատմությունը Հայոց, էջմիածին, 1871, էջ 100:
- 3. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 373-374:

ներկայացված է կամ Մարդպետական կամ Սեպհական եպիսկոպոսությունը, բայց ոչ երկուսը միասին՝ որպես առանձին թեմեր: Հետևաբար, 2 դարի վերջին գոյություն ունեին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն ենթակա երեսուներկու /Այրարատյան թեմի հետ միասին/ եպիսկոպոսություններ:

Այս զլխում անդրադարձել ենք նաև Սյունյաց մետրոպոլիտոսության կազմավորման ժամանակի հարցին\* կապված Ստեփանոս Օրբելյանի վկայության հետ, ինչպես նաև Հայաստանի հարավ-արևելյան երկրամասերի թեմերի /Նիսիորական, Մահկերտուն, Դասն/ պատկանելության խնդրին:

Արքեպիսկոպոսը կազմված է երկու մասերից\*Ս. Ամփոփում Առաջին և Երկրորդ զլուխների, Բ. Ամփոփում Երրորդ զլխի: Ընդհանրացված են ուսումնասիրության արդյունքները, կատարված են ամփոփ եզրակացություններ Դ-Է դդ. Հայ Եկեղեցու թեմական բաժանման և եկեղեցա-դավանական մի շարք սկզբունքային հարցերի վերաբերյալ:

Առենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

- 1. Հայ Եկեղեցու դավանաբանության ձևավորման քաղաքական և զազա-փարաբանական նախադրյալները /, հիմնություն, գիտ. ժողովածու, 1995, թիվ 1, էջ 101-111/:
- 2. Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Ե-Ն դարերում /, էջմիածին, 1995, հունիս-հուլիս, էջ 89-97/:
- 3. Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Դ դարում /, Պատմա-քանասիրական Հանդես, , գտնվում է տպագրության պրոցեսում/:



Конфессиональная борьба и вопрос политической ориентации  
на Христианском Востоке и Армянская Церковь /IV-VI вв./

Резюме

Цель диссертации - показать роль Вселенской Церкви на Христианском Востоке, идеологические и политические причины конфессиональной борьбы, церковные отношения внутри христианского мира в IV-VI вв. в целом и взаимоотношения Армянской Церкви с церквями Христианского Востока /греческой, сирийской, персидской/ в частности. Одновременно предметом исследования являются принципиальные вопросы, касающиеся епархиального деления Армянской Церкви в IV-VII вв.

Диссертация состоит из введения, трех глав /Глава I - Конфессиональная борьба на Христианском Востоке до Халкедонского собора, Глава II - Халкедонский собор и Армянская Церковь, Глава III - Епархиальное деление Армянской Церкви в IV-VII вв./, заключения и библиографии использованных первоисточников и литературы.

Во введении обоснованы актуальность и значение темы, определены основная цель и задачи работы, дан обзор использованных источников и литературы.

Первая и вторая главы работы посвящены исследованию процесса политических и идеологических предпосылок формирования конфессии Армянской Церкви, её участия в теологических спорах, времени возникновения антихалкедонитской позиции Армянской Церкви и некоторых других церковно-конфессиональных проблем.

Ключевой задачей исследования являются взаимоотношения Армянской Церкви с греческой и сирийской, борьба с различными христианскими течениями - несторианством и халкедонизмом. Изложение увязано с церковными и политическими событиями Христианского Востока, причем особое внимание уделено их влиянию на Армению и на Армянскую Церковь.

В третьей главе диссертации сделана попытка дать возможно более полную картину епархиального деления Армянской Церкви IV-VII вв. Рассмотрены пути проповедования христианства в Армению, а также влияние ряда существенных обстоятельств /политической ситуации страны, церковных и политических событий, расположение первоначальных христианских общин и др./ на место, количество и время образования епархий, на церковную территориально-административную структуру.

Работа выполнена на основе исследования и анализа армянских и иностранных источников.

Диссертация представлена на соискание ученой степени кандидата исторических наук.